



Medicare-ի Դեղատոմսով Դուրս Գրվող Դեղորայքի Ծրագրի Ծախսերի Հավելյալ Օգնության Իրավասության Վերանայումը. Որոշ Բաներ Որոնք Դուք Պետք է Իմանաք

Բովանդակություն

Ե՞րբ է Սոցիալական Ապահովությունը իրականացնում այդ վերանայումը՝	1
Ի՞նչպես ինձ հետ կապ կհաստատի Սոցիալական Ապահովությունը՝	1
Ի՞նչպես ես վարվեմ, եթե ձևաթուղթը լրացնելու համար ես ունեմ օգնության կարիք՝	2
Ի՞նչ տեսակի կարգավորումներ կիրականացվեն իմ Հավելյալ Օգնությանը՝	2
Ի՞նչ տեղի կունենա, եթե ես չվերադարձնեմ վերանայման ձևաթուղթը՝	2
Ի՞նչպես ես կիմանամ, թե ինչ որոշում է կայացրել Սոցիալական Ապահովությունը վերանայման արդյունքում՝	2
Ի՞նչպես ես կարող եմ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ՝	2
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	2

Եթե Դուք Հավելյալ Օգնություն եք ստանում Medicare-ի դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծրագրի ծախսերի համար, Սոցիալական Ապահովությունը կարող է պարբերաբար զանգահարել Ձեզ՝ Ձեր կարգավիճակը վերանայելու նպատակով: Տվյալ վերանայումը կերաշխավորի, որ Դուք դեռևս իրավասու եք Հավելյալ Օգնության համար, և դեռևս ստանում եք այն բոլոր նպաստները որոնց արժանի եք:

Եթե Դուք չեք ընտրվել վերանայման համար, ապա Հավելյալ Օգնության գումարը, որը Դուք ստանում եք որևէ փոփոխության չի ենթարկվի:

Ե՞րբ է Սոցիալական Ապահովությունը իրականացնում այդ վերանայումը՝

Վերանայման գործընթացը կիրականացվի յուրաքանչյուր տարի, սովորաբար օգոստոսի վերջին:

Ի՞նչպես ինձ հետ կապ կհաստատի Սոցիալական Ապահովությունը՝

Մենք Ձեր լրացմանը կուղարկենք մի ձևաթուղթ, որը կոչվում է Սոցիալական Ապահովության Վարչության Հավելյալ Օգնությանը Ձեր Իրավասության Վերանայումը (Social Security Administration Review of Your Eligibility for Extra Help (SSA-1026)). Դուք Ձեր տրամադրության

տակ կունենաք 30 օր՝ տվյալ ձևաթուղթը լրացնելու և վերադարձնելու համար: Հավելյալ Օգնության ցանկացած անհրաժեշտ կարգավորումները ուժի կմտնեն հաջորդ տարվա հունվար ամսից: Օրինակ, եթե մենք վերանայման ձևաթուղթը ուղարկում ենք Ձեզ օգոստոս ամսին, և Դուք այն լրացնում եք 30 օրվա ընթացքում և մեզ եք վերադարձնում, ապա Ձեր Հավելյալ Օգնության ցանկացած անհրաժեշտ կարգավորում ուժի կմտնի 2016թ-ի հունվարից:

Ի՞նչպես ես վարվեմ, եթե ձևաթուղթը լրացնելու համար ես ունեմ օգնության կարիք՝

Ընտանիքի անդամները, ինչպես իրականացնողները և այլ երրորդ անձինք կարող են օգնել Ձեզ տվյալ դիմումը լրացնելու հարցում: Սոցիալական Ապահովությունը նույնպես կարող է օգնել Ձեզ հարցերին պատասխանելու գործում: Պարզապես զանգահարե՛ք **1-800-772-1213** հեռախոսահամարով: Խլության կամ լսողության հետ դժվարությունների դեպքում՝ ինչպես մենք զանգահարել մեր **1-800-325-0778** TTY հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև այցելել Ձեր Սոցիալական Ապահովության տեղամասային գրասենյակ՝ աջակցության համար:

Ի՞նչ տեսակի կարգավորումներ կիրականացվեն իմ Հավելյալ Օգնությանը՝

- Ստորև թվարկվածներից որևէ մեկը՝
- Ոչ մի փոփոխություն Ձեր կողմից ստացված Հավելյալ Օգնության գումարում;
 - Ձեր կողմից ստացված Հավելյալ Օգնության գումարի ան;
 - Ձեր կողմից ստացված Հավելյալ Օգնության գումարի նվազում; կամ
 - Ձեր Հավելյալ Օգնության դադարում:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես չվերադարձնեմ վերանայման ձևաթուղթը՝

Ձեր Հավելյալ Օգնությունը կդադարի հաջորդ տարվա հունվար ամսից:

Ի՞նչպես ես կիմանամ, թե ինչ որոշում է կայացրել Սոցիալական Ապահովությունը վերանայման արդյունքում՝

Սոցիալական Ապահովությունը Ձեզ նամակ կուղարկի, որտեղ կբացատրվի մեր կողմից ընդունված որոշումը: Եթե Ձեր կարծիքով որոշում է ճիշտ չէ, Դուք ունեք այն բողոքարկելու իրավունք: Նամակում նույնպես կբացատրվեն Ձեր բողոքարկման իրավունքները:

Ի՞նչպես ես կարող եմ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ՝

Medicare-ի Դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծրագրի ծախսերի մասով Հավելյալ Օգնության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության կամ Սոցիալական Ապահովության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության համար այցելե՛ք **www.socialsecurity.gov** կայքը, կամ զանգահարե՛ք Սոցիալական Ապահովության գրասենյակ՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարներով: Եթե Դուք զանգահարում եք, որովհետև հարցեր ունեք Ձեր կողմից ստացված նամակի վերաբերյալ, ապա ինչպես մենք նամակը ձեռքի տակ ունենալ: Դա կօգնի մեզ որպեսզի կարողանանք պատասխանել Ձեր հարցերին:

Medicare-ի դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծրագրերի և գրանցման հատուկ ժամանակաշրջանների վերաբերյալ տեղեկատվության համար ինչպես մենք այցելել **www.medicare.gov** կայքը կամ զանգահարել **1-800-MEDICARE (1-800-633-4227; TTY 1-877-486-2048)** հեռախոսահամարներով:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր

մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելելք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Եվ՛ած ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելելք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today and tomorrow